Դատական Գործ N: ԵՄԴ/0636/02/09

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	30-06-2009
Հայցվոր/դիմող	
Անուն	Վարշամ
Ազգանուն	Ղարիբյան
Հասցե	Եղիազարյան 10տ
Պատասխանող	
Անուն:	Արմ Սվիթ ՍՊԸ
Հասցե:	Տիչինայի 136
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք՝ պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն առքելելու, ծավալային պատկերները գրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	5.3
Պետական տուրք:	4000
Պետական տուրք:	1000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	

Ամսաթիվ:	30-06-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Մալաթիա-Սեբաստիա
Դատավորի անուն:	Իսկուհի Համբարձումի Վարդանյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Մալաթիա-Սեբաստիա
Դատավորի անուն:	

Որոշման ամսաթիվ:	30-06-2009

Դատաքննության ամսաթիվ:	18-08-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-07-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	1

Ներկայացվել է միջնորդություն:	Ապահովում կիրառելու
Բավ/մերժ:	Բավարարվել է
Որոշման ամսաթիվ:	30-06-2009
Տրվել է կատարողական թերթ:	30-06-2009
Հայցի ապահովման միջոցները:	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
Այլ նշումներ:	

Դատաքննության ամսաթիվ:	26-08-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	19-08-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համար:	1

Դատաքննության ամսաթիվ:	11-09-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	28-08-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	10:30
Նիստերի դահլիճի համար:	1

Հայցի լուծման ամսաթիվ:	24-09-2009
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. օր-ի 1111,1112,1124,1102
Հոդված	
Հոդված	< Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին> ՀՀ օրենք Մաս 65
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ (վճիռ, որոշում):	Քաղ. գործ. ԵՄԴ/ 0636 /02/09/

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
24.09.2009թվ. ք. Երևան
Երևան քաղաքի Մալաթիա - Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանը
հետյալ կազմով
Նախագահող դատավոր Ի. Վարդանյան
Քարտուղարությամբ Զ. Խաչատրյանի
Մասնակցությամբ
հայցվորի ներկայացուցիչներ Ա. Մարտիրոսյանի,
Հ. Սաֆարյանի
պատասխանողի ներկայացուցիչ Բ. Վարդանյանի

Դռնբաց դատական նիստում դատարանում քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի ընդդեմ «Արմ Սվիթ» ՍՊԸ-ի հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու. որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին
Պ Ա Ր Զ Ե Ց
1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայաստանի Հանրապետության Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 1997-98թթ-ին հաստատվել և գրանցվել է հայցվոր Վարշամ Ղարիբյանի «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» մի շարք օբյեկտների հետ կապված հեղինակային իրավունքները և դրանք ի պահ են հանձնվել ՀՀ «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում:
Պատասխանող «Արմ Սվիթ» ՍՊԸ-ն 2008թվ. հունիս ամսից սկսած, առանց հայցվորի համաձայնության, պատրաստի արտադրանքը փաթեթավորել է հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ»-եր հանդիսացող ծավալային պատկերները կրող պաղպաղակի փաթեթավորման թղթերով, այնուհետև այն շրջանառության մեջ է դրել, որով խախտել է հայցվորի բացառիկ հեղինակային իրավունքները:
Հեղինակային իրավունքների պաշտպանության համար, հայցվորը 30.06. 2009թվ. դիմել է դատական պաշտպանության:
Դատավոր Ի. Վարդանյանի որոշմամբ, նույն օրը քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:
Պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան չի տրվել:

2. Հայցվորի ներկայացուցիչների իրավական դիրքորոշումը

Դիմելով դատարան հայցվորի ներկայացուցիչները / Արթուր Մարտիրոսյան գործում նոտարական կարգով վավերացված լիազորագրով, հաստատված 08.10. 2008թվ Աջափնյակ նոտարական գրասենյակի կողմից, սեղ. թիվ 5776. անձ.AF 0494124 տրված18.04. 2002թվ. 013-ի կողմից/
Հակոբ Սաֆարյանը / անձ.AK0314214 տրված 08.06.2009թվ. 009-ի կողմից/ հայտնեցին, որ Հայաստանի Հանրապետության հեղինակային իրավունքների գրանցման ոլորտում, որպես պետական լիազորված մարմին «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության» կողմից, 22. 07. 1997 թվ. տրված Հեղինակային Իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի համաձայն, հաստատվել է ՀՀ «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» /թվով 52/ օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր

	իրավունքները: Այդ թվում «Բրիկետ», «Վանիլային», «Ֆանտազիա», «Կոռնետ», «Դույլ ընտանեական», «1 և 0,5 կիլոգրամանոց»: ՀՀ «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 06. 04. 1998 թվ. տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի համաձայն, հաստատվել է ՀՀ «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի «Դիզայն երկեր» օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները: Համաձայն «Հայհեղինակ» հեղինակային իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից տրված թիվ 07/81-27.03. 2006թվ, թիվ 07/ 285-01.08.2008թվ և թիվ 07/416- 18.112008 թվ, գրությունների, հայցվոր Վարշամ Ղարիբյանը ՀՀ «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել իր ստեղծագործությունները: Պատասխանող «Արմ Սվիթ» ՍՊԸ-ն 2008թվ. հունիս ամսից սկսած, Երևան քաղաքի Տիչինայի 136 հասցեում, պաղպաղակ արտադրելով, առանց հայցվորի համաձայնության, պատրաստի արտադրանքը փաթեթավորել է հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ»-եր հանդիսացող ծավալային պատկերները կրող պաղպաղակի փաթեթավորման թղթերով, կամ շփոթելու աստիճանի դրանց նմանություն ունեցող համակցված նշաններ պարունակող փաթեթավորման թղթերով, ինչպիսիք են՝ «Բրիկետ», «Վանիլային», «Ֆանտազիա», «Կոռնետ», «Դույլ ընտանեական», «1 և 0,5 կիլոգրամանոց» և այլն: Նշված արտադրանքն այնուհետև իրացրել է Երևան քաղաքում և ՀՀ մյուս տարաշրջաններում: Հայտնեցին, որ հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների գործածումը պատասխանող ընկերության կողմից, առանց հայցվորի համաձայնության, խախտում է վերջինիս ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները; Խնդրեցին դատարանին, կանխել հայցվոր Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքների խախտումները պատասխանող «Արմ սվիթ» ՍՊԸ-ի կողմից և որպես հետևանք, պատասխանող ընկերությանը արգելել հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումը և պարտավորեցնել նրան ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել: Հայտնեցին, որ պահանջը հիմնավորում են հայցադիմումին կից, հեղինակային իրավունքը հաստատող փաստաթղթերով, ապրանքանիշերի ծավալային պատկերներով: Պահանջի համար կիրառելի են համարում նշված ժամանակահատվածում գործող «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համապատասխան դրույթները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1102.1103.1104, 1111,1112,1124 հոդվածները: 2. Պատասխանողի ներկայացուցչի իրավական դիրքորոշումը Պատասխանողի ներկայացուցիչ Բ. Վարդանյանը /գորշում է «Շանթ Պլյուս»ՍՊԸ-ի տնօրինության կողմից 25.06..2009թվ տրված և հաստատված լիազորագրով, անձ. AF0294004 տրված 17.04. 2001թվ.005-ի կողմից/ հայցապահանջի դեմ առարկեց, հետևյալ պատճառաբանությամբ, հայտնեց որ ըստ գործի նյութերի, հայցվորը «ծավալային պատկերների հեղինակը լինելու փաստը հաստատելու համար դատարանին է ներկայացրել ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից 22.07.1997թվ և 05.04. 1998թվ. տրված հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին վկայականների պատճենները, «Հայհեղինակ» հասարակական կազմակերպության կողմից 01.08. 09թվ. և 27.03. 06թվ. տրված հեղինակային իրավունքի օբյեկտի ի պահ հանձնելու մասին

գրությունները և ի պահ հանձնելու օրինակին համապատասխանելու մասին «Հայհեղինակ» հասարակական կազմակերպության կնիքի վավերացմամբ փաստաթղթերը:
Նշված փաստաթղթերը չեն կարող հաստատել «ծավալային պատկերների» նկատմամբ հայցվոր Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքներ ունենալու փաստը, քանի որ նա դատարանին չի ներկայացրել այդ վկայականների բնօրինակները, կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ վավերացված պատճենները, որոնցով չեն կարող հաստատվել «ծավալային պատկերների» նկատմամբ հայցվոր Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքները: Նման պայմաններում, դրանք թույլատրելի և վերաբերելի ապացույց չեն և չեն կարող դրվել վճռի հիմքում:
Նշված վկայականներից երևում է միայն ստեղծագործության անվանումը, սակայն բուն ստեղծագործությունն ինչպիսին է, ինչ պատկեր ունի, չի երևում.Հետևապես պնդել, որ վկայականների մեջ նշված ստեղծագործության անվանումը, դա հատկապես այն ստեղծագործությունն է, որը ներկայումս դատարանում վիճարկվում է հնարավոր չէ:
Բացի այդ, հայցվորը դատարան է ներկայացրել ստեղծագործությունների անվանումը և պատկերը կրող «Հայհեղինակ» հասարակական կազմակերպության կնիքի պատկերը կրող մի շարք փաստաթղթեր: Դրանք չեն կարող դիտվել որպես ապացույց և հաստատել «ծավալային պատկերների» նկատմամբ Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքը, քանի որ փաստաթղթերի զննությունից պարզվում է, որ դրանց վրա նշված է ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության պետական մարմնի անվանումը, առկա է կնիքի վավերացում այն մասին, որ համապատասխանում է ի պահ հանձնված օրինակին: Փաստաթղթի վրա նշված չէ որևէ ամսաթիվ, բացակայում է ի պահ հանձնված օրինակի համապատասխանությունը վավերացնող անձի անվամբ, ստորագրությունը, կնիքը պատկանում է «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությանը և անհասկանալի է, եթե հեղինակային օբեկտը գրանցվել է ՀՀ հեղինակային իրավունքի ազգային գործակալությունը, ինչու է փաստաթղթի վրա դրվում «Հայհեղինակ» հասարակական կազմակերպության կնիքը:
Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն, որ գործում առկա է ՀՀ հեղինակային իրավունքի ազգգային գործակալության կողմից Վարշամ Ղարիբյանին տրված տեղեկանքը, որում Վարշամ Ղարիբյանի անձնագրի տվյալները նշված են ԱԱ 0276809 համարով և սերիայով, իսկ համապատասխանատվության վավաերացումն ունեցող փաստաթղթում Վարշամ Ղարիբյնաին անձնագրի տվյալները նշված են AF 0577188 համարով և սերիայով:
«Հայհեղինակ» հասարակական կազմակերպության կնիքով վավերացված փաստաթղթում պատկերված է պաղպաղակ արտադրող կազմզկերպության պատրաստի արտադրանքի լուսանկարը և նման պայմաններում հաստատել այն փաստը, որ դրա նկատմաբ Վարշամ Ղարիբյանը հեղինակային իրավունք ունի, հնարավոր չէ: Ավելին, առանձին փաստաթղթում պատկերված է մեկ պատկեր, սակայն նշված է երկու առանձին ստեղծագործության անվանումներ, օրինակ «1կգ. տոպրակ, 0.5կգ. տոպրակ» այն դեպքում, որ ՀՀ հեղինակային իրավունքի ազգային գործակալության վկայականի պատճեում նշված է «1.0.կգ». տոպրակ:
«0.5 կգ.» տոպրակ, անվանումը, որպես Վարշամ Ղարիբյանին պատկանող հեղինակային իրավունքի օբեկտ նշված չէ, և չնայած այդ հանգամանքին, Վարշամ Ղարիբյանը դրա մասով պահանջ է ներկայացրել, իսկ դատարանը կիրառել է հայցի ապահովման միջոց:
Բերված փաստարկները հիմք են տալիս պնդելու, դատարան ներկայացված «Հայհեղինակ» հասրակական կազմակերպության կնիքը կրող փաստաթղթերն արժանահավատ չեն և չեն համապատասխանում ՀՀ քաղ. դատ. օրենսգրքով գրավոր ապացույցներին ներկայցվող պահանջներին, հետևապես դրանք չեն

	կարող գնահատվել որպես գրավոր ապացույցներ: Հայտնեց նաև, որ ըստ «Հայհեղինակ» հասրակական կազմակերպության կնիքը կրող փսատաթղթում արտացոլված պատկերի, Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքի մի մասն է կազմում նաև պաղպաղակի բաղադրության վերաբերյալ գրվածքները, հեռախոսահամարները, հասցեն, ապրանքային կոդավորումը, ֆիրմային անվանումը: Չնայած այն հանգամանքին, որ այդ տեղեկությունները չէին կարող լինել Վարշամ Ղարիբյանի մտավոր գործունեության արդյունքը, «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունն, իր կնիքով առանց անվանման և ստորագրության, հաստատել է, որ ստեղծագործությունը համապատասխանում է իպահ հանձնված օրինակին: Եթե դատարանը նշված փաստաթղթերը դիտի որպես ապացույց և դնի իր կողմից կայացված վճռի հիմքում, ապա կստացվի մի իրավիճակ,որ ցանկացած անձ պաղպաղակ արտադրող կազմակերպության պատրաստի արտադրանքի լուսնկարը տեղադրելով, ամսաթվի թվագրում չունեցող, անստորագիր փաստաթղթի վրա, կարող է հաստատել իր հեղինակային իրավունքը, լուսանկարում արտադրված պատկերի նկատմամբ: Դատարան ներկայացված «ծավալային պատկերները» կարող էին գծագրվել, պատկերվել համակարգչի միջոցով, կամ թղթի վրա ձեռքով նկարելու միջոցով: Սույն գործով Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքը «ծավալային պատկերների« նկատմամբ հաստատող թույլատրելի ապացույց կարող էր լինել միայն նրա ձեռքով պատկերված էսքիզները, որը նույնությամբ կհամընկներ «Արմսվիթ» ՍՊ ընկերության փաթեթավորման թղթերի վրա արտացոլված պատկերների հետ; Սակայն հայցվոր կողմն այդպիսի ոչ մի ապացույց չի ներկայացրել: Ավելին դատարան չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ Վարշամ Ղարիբյանը տիրապետում է համակարգչին կամ ունի դիզայների որակավորում կամ հմուտություններ: Հատկանշակ է նաև , որ ներկայացված հայցադիմումում նշված է միայն Վարշամ Ղարիբյանի անունով հեղինակային իրավունքի օբեկտների գրանցման մասին, սակայն ոչ այն մասին, որ գրանցված հեղինակային իրավունքի օբեկտը հատկապես ստեղծվել է Վարշամ Ղարիբյանի կողմից: Համաձայն «Հեղինակային և հարակից իրավունքների» մասին օրենքի 6 հոդվածի. հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ով ստեղծել է ստեղծագործությունը: Նշված իրավունքի պահանջից ելնելով, «հեղինակ» պետք է դիտել ստեղծագործությունը անմիջականորեն ստեղծող անձին և ոչ թե այն անձին, որի անունով գրանցվել է ստեղծագործությունը: Համաձայն Սովետական Հայաստան հանրագիտարանի, «դեկորատիվ կիրառական արվեստ«-ը դա արվեստի առնաձին բնագավառ է և վերաբերվում է գեղարվեստական իրերի ստեղծմանը, որոնք գործնական նշանակություն ունեն հասարակական և մասնավոր կենցաղում[a] օրինակ կահույքը, զարդերը, հագուստը: Դեկորատիվ կիրառական արվեստի սահմանումնումից ելնելով գտնում է, որ պաղպաղակի փաթեթավորման թղթերի վրա պատկերված պատկերները չեն կարող դիտվել դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործություն: Բացի այդ ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ իրավական ակտով նախատեսված չէ ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության լիազորությունը, կատարելու անձանց հեղինակային իրավունքի գրանցում: Մինչդեռ ՀՀ Սահմանդրության 5 հոդ. համաձայն պետական մարմիները իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որի համար լիազորված են օրենքով: Հայցվորը դատարան է ներկայացրել նաև «Շանթ Պլյուս» ՍՊ ընկերության փաթեթավորման թղթերն և պարզ չէ այդ

	փաթեթավորման թղթերը, ինչով են առնչվում «Արմսվիթ» ՍՊ ընկերության հետ: Հայցվորը պահանջել է դատարանից կանխել հեղինակային իրավունքի խախտումները և որպես հետևանք արգելել «Արմսվիթ» ՍՊ ընկերության հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումը, պարտավորեցնել ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել: Համաձայն հայցվորի կողմից ներկայացված ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության կողմից տրված վկայականների և «Հայհեղինակ» հասարակական կազմզկերպության կողմից տրված գրությունների գրանցվել, կամ ի պահ է հանձնվել «դիզայնի երկ»-եր և «դեկորատիվ կիրառական արվեստի երկ»-եր: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1112 հոդ. սահմանում է հեղինակային իրավունքի օբեկտների տեսակները և «ծավալային պատկեր» հասկացությունը նախատեսված չէ, որպես հեղինակային իրավունքի օբեկտի տեսակ, այսինքն հայցվորը պահանջ է ներկայցրել մի առարկայի վերաբերյալ, որը չի հանդիսանում հեղինակային իրավունքի օբեկտի տեսակ: Հայցվորն իր կողմից ներկայացված հայցադիմումում նշում է, որ «Արմսվիթ» ՍՊ ընկերություն,ն իր արտադրանքը փաթեթավորել է իր «դեկորատիվ կիրառական արվեստի երկ» հանդիսացող ստեղծագործության պատկերը կրող փաթեթավորման թղթերով , կամ շփոթելու աստիճան դրանց նմանությունը ունեցող փաթեթավորման թղթերով: «Արմսվիթ» ՍՊ ընկերության փաթեթավորման թղթերի պատրաստման դիզայներական աշխատանքները, կատարել են «Արմսվիթ» ՍՊ ընկերության դիզայներները և դրանք որպես տարբեր անձանց կողմից ստեղծված առանձին և ինքնուրույն ստեղծագործություններ չեն կարող նույնությամբ համընկնել Վարշամ Ղարիբյանի կողմից ներկայացված փաթեթավորման թղթերի վրա պատկերված պատկերների հետ: Եթե հայցվորը նման փաստարկ է վկայակոչում, ապա նա ՀՀ քաղ. դատ. օրենսգրքի 48 հոդ. պահանջից ելնելով, պետք է ապացուցի իր կողմից վկայակոչված փաստերը: Սակայն հայցվորը գործի նախապատրաստական փուլում ապացույցներ չի ներկայցրել այն մասին, որ «Արմսվիթ» ՍՊ ընկերության փաթեթավորման թղթերի վրա առկա պատկերները, շփոթելու ատիճան նմանություն ունեն Վարշամ Ղարիբյանի կողմից ներկայացված վիճարկվող պատկերների հետ: 4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը Գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ չվիճարկվող փաստերը[a] 1.«Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության» կողմից, 22. 07. 1997 թվ. տրված Հեղինակային Իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի պատճենը, /որը դատաքննության ընթացքում համեմատվեց իսկականի հետ, այն ճիշտ է/ համաձայն որի հաստատվել է ՀՀ «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի «Դեկորատիվ կիրառական արվեստի երկ», «Պաղպաղակների տեսակներ և անվանումներ» /թվով 52/ օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները: Այդ թվում «Բրիկետ», «Վանիլային», «Ֆանտազիա», «Կոռնետ», «Դույլ ընտանեական», «1 և 0,5 կիլոգրամանոց»: 2.ՀՀ «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության կողմից 06. 04. 1998 թվ. տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի պատճենը /որն իսկականի հետ ճիշտ է/, համաձայն որի հաստատվել է ՀՀ «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի «Դիզայն երկեր» օբյեկտների

	հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները: 3.Համաձայն «Հայհեղինակ» հեղինակային իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից տրված թիվ 07/81-27.03. 2006թվ, թիվ 07/ 285-01.08.2008թվ և թիվ 07/416- 18.112008 թվ, գրությունները, ըստ որոնց հայցվոր Վարշամ Ղարիբյանը ՀՀ «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել իր ստեղծագործությունները: 4.Վարշամ Ղարիբյանին հեղինակային իրավունքով պատկանող «Բրիկետ», «Վանիլային», «Ֆանտազիա», «Կոռնետ», «Դույլ ընտանեական», «1 և 0,5 կիլոգրամանոց» տեսակի պաղպաղակների ծավալային պատկերները 5.«Արմ Սվիթ» ՍՊ ընկերության կողմից արտադրվող «Բրիկետ», «Վանիլային», «Ֆանտազիա», «Կոռնետ», «Դույլ ընտանեական», «1 և 0,5 կիլոգրամանոց» տեսակի պաղպաղակների ծավալային պատկերները 6. «Արմ Սվիթ» ՍՊ ընկերության կողմից նշված ծավալային պատկերների նկատմամբ հեղինակային իրավունքը գրանցված չլինելը: 5. Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումները: Գնահատելով դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները, կողմերի ներկայացուցիչների զուցմունքները, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող չվիճարկվող փաստերը, դատարանը հանգեց այն հետևության, որ հայցապահանջը հիմնավորված է և այն ենթակա է բավարարման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներին համապատասխան հետևյալ պատճառաբանությամբ: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1111 հոդվածի համաձայն, հեղինակային իրավունքը տարածվում է ստեղծագործական արդյունք համարվող գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների վրա,անկախ ստեղծագործության նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաև այն արտահայտելու եղանակից: Ստեղծագործությունը պետք է արտահայտվի բանավոր, գրավոր կամ այն ընկալելու հնարավորությունը թույլատրող այլ օբյեկտիվ ձևով, անկախ երրորդ անձանց համար այն մատչելի լինելուց: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1112 հոդվածի համաձայն, հեղինակային իրավունքի օբյեկտներ են հանդիսանում գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները: Նույն օրենսգրքի 1124 հոդվածի համաձայն, հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց դրա օգտագործումը, մասնավորապես դրա վերարտադրմամբ, տարածմամբ, անկախ այն բանից այն օգտագործվել է շահույթ ստանալու նպատակով, թե առանց այդ նպակակի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1102 հոդվածի համաձայն, մտավոր գործունեության արդյունքների հեղինակին են պատկանում այդ արդյունքների նկատմամբ անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները: Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի 65 հոդվածի համաձայն, սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությամբ: Նման պայմաններում երբ հայցվոր հանդիսանում է վիճարկվող ծավալային պատկերների հեղինակը և նրա իրավունքը, որպես

	այդպիսին սահմանված կարգով գրանցված է «Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալության» կողմից և հեղինակային իրավունքով նրան են պատկանում «Բրիկետ», «Վանիլային», «Ֆանտազիա», «Կոռնետ», «Դույլ ընտանեական», «1 և 0,5 կիլոգրամանոց» տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների հեղինակային բոլոր իրավունքները, որոնք ի պահ է հանձնվել ինչպես նախորդ, այնպես էլ դրա իրավահաջորդ ՀՀ «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունում, երբ պատասխանող կազմակերպությունը նշված ծավալային պատկերների օգտագործման կապակցությամբ չունի օրենքով սահմանված կարգով որևէ իրավասություն, դատարանը հանգեց այն հետևության, որ նման պայմաններում պատասխանողի ներկայացուցչի առարկություններն անհիմն են: Պետ տուրքի հարցը քննելիս, դատարանը գտավ, որ այն պետք է համարել լուծված: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124. 130-132, 140.140-1 հոդվածներով դատարանը Վ Ճ Ռ Ե Տ Հայցապահանջը բավարարել : Արգելել «Արմսվիթ» ՍՊԸ-ի կողմից Վարշամ Ղարիբյանին հեղինակային իրավունքով պատկանող «Բրիկետ», «Վանիլային», «Ֆանտազիա», «Կոռնետ», «Դույլ ընտանեական», «1 և 0,5 կիլոգրամանոց» տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների օգտագործումը և պարտավորեցնել նրան այդ ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել: Պետ տուրքի հարցը համարել լուծված: Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով[a] պարտապանի հաշվին : Սույն դատական ակտը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան[a] հրապարակման պահից մեկամսյա ժամկետում: Դատավոր Ի. Վարդանյան
Դատական ակտի ամսաթիվը:	24-09-2009
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	20-10-2009
էջերի քանակը:	2 հատոր
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	21-10-2009
էջերի քանակը:	2 հատոր
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	21-10-2009
Ուր:	դատարանի արխիվ
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	

Ամսաթիվ:	22-10-2009

Ամսաթիվ:	28-04-2010
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	30-04-2010
Էջերի քանակը:	2 հատոր
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	

Դատական Գործ N: ԵՄԴ/0636/02/09

Ամսաթիվ:	22-10-2009
Ամսաթիվ:	26-10-2009
Բողոք բերող անձը	
Անուն:	Արմսվիթ ՍՊԸ
Հասցե:	ք.Երեւան
Բողոք բերող անձը	
Անուն:	Շանթ Պլյուս ՍՊԸ
Հասցե:	ք.Երեւան
Ներկայացուցիչ	
Անուն	Նոնա
Ազգանուն	Գալստյան
Հասցե	ք.Երեւան
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվոր
Ում կողմից է բերվել բողոքը:	Գործին մասնակից չդարձված անձ
Պետական տուրք:	10000
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	24.09.09 բավարարվել է
Գործի համարը:	ԵՄԴ/0636/02/09

Ամսաթիվ:	25-11-2009
Վիճակագրական տողի համարը:	5.3
Գործի համարը:	ԵՄԴ/0636/02/09

Գործը բաղկացած է (հատորը / էջերի քանակ):	1-114, 2-57
Գործը ստացվել է:	Մալաթիա-Սեբաստիա
Ամսաթիվ:	26-11-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Գոհար Մատինյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Լևոն Գրիգորյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Արմեն Էդուարդի Թումանյան
Երբ:	30-11-2009
Որոշումը ուղարկվել է կողմերին:	02-12-2009
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	02-12-2009
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	13-01-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	02-12-2009
Ժամ:	11:10
Նիստերի դահլիճի համարը:	103
Ամսաթիվ:	27-01-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	
Ժամ:	14:30
Նիստերի դահլիճի համարը:	103
Ամսաթիվ:	27-01-2010
Մասնակի բեկանվել է դատական ակտը:	Փոփոխվել է ստորադաս դատարանի դատական ակտը
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Քաղաքացիական գործ N ԵՄԴ 0636/02/09 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով՝ Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան

Դատավորներ Լ.Գրիգորյան
Ա.Թումանյան

2010 թվականի հունվարի 27-ին

Դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործով ըստ հայցի՝ Վարշամ Ղարիբյանի ընդդեմ <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության՝ հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵՄԴ/0636/02/09 քաղաքացիական գործով 2009 թվականի սեպտեմբերի 24-ին կայացրած վճռի դեմ պատասխանող <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության տնօրեն Մ.Ղուկասյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.
30.06.2009 թվականին հայցվոր Վարշամ Ղարիբյանի ներկայացուցիչները դիմելով Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրել են կանխել Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքների խախտումները պատասխանող <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության կողմից և որպես հետևանք, պատասխանող ընկերությանն արգելել հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումը և պարտավորեցնել նրան ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել:
Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/ 2009 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ ԵՄԴ/0636/02/09 վճռով հայցը բավարարվել է:
Սույն գործով վերաքննիչ բողոք է ներկայացրել պատասխանող <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության տնօրեն Մ.Ղուկասյանը:
Հայցվորը վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացրել:
2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.
Սույն վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.
Բողոք բերած անձը գտնում է, որ Դատարանի կողմից խախտվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի, 51-րդ հովածի 2-րդ կետի, 53-րդ հովածի, 132-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:
Խախտելով օրենքի այս պահանջը, Դատարանը չի հանել ապացույցների կազմից հետևյալ ապացույցները.
ա/ ՀՀ Հեղինակային իրավունքների ազգային գործակալության /այսուհետ՝ ՀԻԱԳ/ կողմից 06.04.1998 թվականին տրված թիվ 00218 վկայականը, որում ոչ մի խոսք չկա սույն վեճի առարկա հանդիսացող՝ <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազի>>, <<Կոռնետ>>, <<Դույլ ընտանեական>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերներից որևէ մեկի մասին:
բ/ <<Հայհեղինակ>> հեղինակային իրավունքների պաշտպանության

հասարակական կազմակերպության /այսուհետ՝ Հասարակական կազմակերպություն/ 27.03.2006 թվականի թիվ 07/81 և 01.08.2008 թվականի թիվ 07/285 գրությունները, որոնցում նույնպես խոսք չկա <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազի>>, <<Կոռնետ>>, <<Դույլ ընտանեական>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերներից որևէ մեկի մասին:
Ավելին, հռչակելով այս փաստաթղթերը որպես <<Գործի համար էական նշանակության ունեցող փաստեր>>, Դատարանը վճռի պատճառաբանական մասում չի նշել, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են դրանցով հաստատվում:
Դատարանը հաստատված է համարել, որ հայցվորը հանդիսանում է վիճարկվող ծավալային պատկերների հեղինակը:
Սակայն, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 4–րդ պարբերության պահանջը, Դատարանը՝ վճռի պատճառաբանական մասում, չի մատնանշել ապացույցները, որոնց վրա հիմնված է այդ հետևությունը:
Գործում առկա փաստաթղթերից միայն ՀԻԱԳ կողմից 22.07.1997 թվականին տրված թիվ 00172 վկայականում է, որ Վարշամ Ղարիբյանը նշված է որպես <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազի>>, <<Կոռնետ>>,<<Դույլ ընտանեական>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> պաղպաղակների տեսակների և անվանումների հեղինակ: Ընդորում, այդ վկայականում թվարկված են պաղպաղակի տեսակներ, և դրանք անվանված են դեկորատիվ կիրառական արվեստի երկեր:
Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի չի գնահատել այս ապացույցը:
Մասնավորապես, Դատարանը հաշվի չի առել այն փաստը, որ այս վկայականում խոսք չկա այն մասին, որ Վարշամ Ղարիբյանը հանդիսանում է <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազի>>, <<Կոռնետ>>,<<Դույլ ընտանեական>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների հեղինակ:
Դատարանի ուշադրությունից նաև դուրս է մնացել ու չի գնահատվել այն հանգամանքը, որ <<Վանիլային>>–ի և <<0,5 կիլոգրամանոց>>–ի մասին այդ վկայականում առհասարակ որևէ խոսք չկա:
Բացի այդ, Դատարանը, միակողմանի գնահատելով այս ապացույցը, հաշվի չի առել, որ այդ վկայականում Վարշամ Ղարիբյանը գրանցված է ոչ թե ծավալային պատկերների հեղինակ, այլ <<ՊԱՂՊԱՂԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ (թվով 52) ... /թվարկված են պաղպաղակներ/, որի հեղինակն է Վարշամ Ղարիբյանը>>:
Վերջապես, Դատարանը, կրկին խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջը, հաշվի չի առել, որ այս վկայականին կցված չեն դրանում թվարկված պաղպաղակների պատկերները (լուսանկարները): Դրանից ելնելով՝ այդ վկայականը որևէ հնարավորություն չի տալիս որոշելու, թե ինչ արտաքին տեսք են ունեցել այն պաղպաղակները, որոնց <<տեսակների և անվանումների>> նկատմամբ գրանցվել է Վարշամ Ղարիբյանի հեղինակային իրավունքը:
Դատարանը վճռի պատճառաբանական մասում չի անդրադարձել լուսանկարներին, որոնց վրա պատկերված են վիճելի դիզայնով պաղպաղակները, ու որոնց վրա դրված է Հասարակական կազմակերպության կնիքը:
Սակայն, նկատի ունենալով, որ այդ լուսանկարները նույնպես հիշատակված են <<գործի համար էական նշանակություն ունեցող փաստեր>>–ի մեջ, ուստի պետք է ենթադրել, որ Դատարանը, չհիշատակելով դրանք վճռի պատճառաբանական մասում, այնուամենայնիվ հաշվի է առել դրանք վճիռը կայացնելիս, որով կրկին խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, չի պարզել ու

գնահատական չի տվել այն փաստին, որ նշված լուսանկարներում նշված է ՀԻԱԳ-ի անվանումը, սակայն դրանք վավերացված են Հասարակական կազմակերպության կողմից, այդ փաստաթղթերը անստորագիր են, և չունեն ամսաթվի թվագրում:
Պարզված չէ, թե այդ երկու կազմակերպություններից որ մեկը պետք է համարվի այդ ապացույցի հեղինակը և Հասարակական կազմակերպությունը ինչ իրավասություն է ունեցել հեղինակային իրավունքի գրանցման ոլորտում:
Գործում չկա Հասարակական կազմակերպության կանոնադրությունը, իսկ Դատարանը չի պարզել, թե այդ Հասարակական կազմակերպությունը ունեցել է արդյոք լիազորություններ կազմելու և վավերացնելու այն բոլոր փաստաթղթերը, որոնք վերջինիս վավերացմամբ, կցված են գործին:
Դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ, 55-րդ հոդվածների խախտում. մասնավորապես՝ դատաքննության փուլում հայցվոր կողմը դատարան է ներկայացրել փաստաթղթերի նոտարական կարգով վավերացված պատճեն, Դատարանը նոտարական կարգով վավերացված պատճենը դիտել է որպես բնօրինակ և հաստատել, որ ի սկզբանե հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են բնօրինակին, և դա արվել է այն դեպքում, երբ բնօրինակ վկայագրեր, վկայականներ հայցվորը դատարան չի ներկայացրել, ավելին՝ Դատարանը նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի պատճենները դատաքննության ընթացքում վերադարձրել է հայցվոր կողմին:
Դատարանի վճռի պատճառաբանական մասում հաստատված է համարվել՝ <<հեղինակային իրավունքով նրան՝ հայցվորին են պատկանում <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազի>>, <<Կոռնետ>>,<<Դույլ ընտանեական>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների հեղինակային բոլոր իրավունքները, որոնք ի պահ են հանձնվել ինչպես նախորդ, այնպես էլ դրա իրավահաջորդ ՀՀ <<<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում>>:
Խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ Դատարանը չի նշել, թե գործում առկա որ ապացույցի(ների) վրա է հիմնված այն հետևությունը, որ նշված հեղինակային իրավունքները գրանցված են Վարշամ Ղարիբյանի անվամբ:
Խախտելով օրենքի նույն պահանջը՝ Դատարանը չի նշել, թե որ ապացույցն է հիմք տվել եզրակացնելու, որ Հասարակական կազմակերպությունը ՀԻԱԳ-ի իրավահաջորդն է:
Ինչ վերաբերում է Դատարանի վճռի պատճառաբանական մասի ամփոփմանը՝ <<դատարանը հանգեց այն հետևության, որ նման պայմաններում պատասխանողի ներկայացուցչի առարկություններն անհիմն են>>, ապա այս դեպքում Դատարանը շփոթմունքի մեջ է ընկել՝ հայցը բավարարելու հիմքը ոչ թե պատասխանողի առարկությունների անհիմն լինելն է, այլ՝ հայցվորի պատճառաբանությունների հիմնավոր լինելը:
Դատարանը, յուրօրինակ և օրենքի իմաստին տրամագծորեն հակառակ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, հայցը բավարարելու հիմքում է դրել ոչ թե հայցվորի պատճառաբանությունների հիմնավորվածության, այլ պատասխանողի առարկությունների՝ անհիմն լինելու հանգամանքը:
Ելնելով վերոգրյալից՝ բողոք բերած անձը խնդրել է բեկանել Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 24-ին թիվ ԵՄԴ/0636/02/09 քաղաքացիական գործով կայացված վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:
3. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.
1. ՀԻԱԳ-ի կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային Իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայական

պատճենի համաձայն՝ ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված են Վարշամ Ղարիբյանի <<Դեկորատիվ կիրառական արվեստի երկ>>, <<Պաղպաղակների տեսակներ և անվանումներ>> /թվով 52/ օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները:
2. ՀԻԱԳ-ի կողմից 06.04.1998 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի պատճենի համաձայն՝ ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված է Վարշամ Ղարիբյանի <<Դիզայն երկեր>> օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները:
3. Հասարակական կազմակերպության կողմից 27.03. 2006 թվականին տրված թիվ 07/81, 01.08.2008 թվականին տրված թիվ 07/285 գրությունների համաձայն՝ հայցվոր Վարշամ Ղարիբյանը ՀՀ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել <<Կոնֆետներ>>-ի փաթեթի դիզայն, <<Շանթ>> ապրանքային նշանի դիզայն, ստեղծագործությունները:
4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.
Քննելով վերաքննիչ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը հիմնավոր է, այն ենթակա է բավարարման մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հոտազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:
ՀՀ վճռաբեկ դատարանը, ըստ հայցի <<ԱՎԱ>> ՍՊԸ-ի ընդդեմ անհատ ձեռնարկատեր Սերգեյ Գաբրիելյանի և Վիոլետա Գաբրիելյանի՝ անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը վաղաժամկետ լուծելու, տարածքից վտարելու պահանջների մասին, և ըստ Սերգեյ Գաբրիելյանի հակընդդեմ հայցի՝ պայմանագիրը շինծու գործարք ճանաչելու և որպես շինծու գործարքի հետևանք ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրին վերաբերող կանոնները կիրառելու պահանջների մասին թիվ 3-89/ՏԴ/ քաղաքացիական գործով 01.02.2008 թվականի կայացրած որոշմամբ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական դատավարության 53-րդ հոդվածը, փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը:
Ապացույցների բազմակողմանի հետազոտությունը ենթադրում է այնպիսի ապացույցների բավարար առկայություն և գործում առկա ապացույցների համադրության մեջ գնահատում, որը դատարանին հնարավորություն է տալիս հանգելու համապատասխան հետևության:
Սույն գործով Դատարանը վճռի <<Դատարանի իրավական վերլուծությունը և եզրահանգումները>> մասում, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1111-րդ, 1112-րդ,1124-րդ հոդվածներին, ինչպես նաև <<Հեղինակային և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի պահանջներին, հաստատված է համարել, որ հայցվոր Վարշամ Ղարիբյանը վիճարկվող ծավալային պատկերների հեղինակն է, նշել է, որ նրա իրավունքը, որպես այդպիսին սահմանված կարգով գրանցված է ՀԻԱԳ-ի կողմից, և հեղինակային իրավունքով նրան են պատկանում <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազիա>>, <<Կոռնետ>>, <<Դույլ ընտանեական>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների հեղինակային բոլոր իրավունքները, որոնք ի պահ է հանձնվել ինչպես նախորդ, այնպես

էլ դրա իրավահաջորդ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում:
Դատարանը Վարշամ Ղարիբյանի հայցի բավարարման համար, որպես ապացույց հիմք է ընդունել ՀԻԱԳ-ի կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 պատճենը, որի համաձայն՝ ՀԻԱԳ-ում գրանցված են Վարշամ Ղարիբյանի՝ <<Դեկորատիվ կիրառական արվեստի երկ>>, <<Պաղպաղակների տեսակներ և անվանումներ>> /թվով 52/ օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները:
Մինչդեռ Վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ նշված վկայականի պատճենում առկա թվով 52 <<Պաղպաղակների տեսակներ և անվանումներ>>-ի մեջ նշված են միայն <<Արմ Սվիթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից օգտագործվող <<Բրիկետ>>, <<Ֆանտազիա>>, <<1 կիլոգրամանոց>>, <<Կոռնետ>> անվանումները, իսկ վիճարկվող <<Վանիլային>>, <<Դույլ ընտանեկան>>, <<0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների վերաբերյալ նշված վկայականում որևէ նշում չկա:
Այսինքն՝ բողոքարկած վճռում դատարանը, նշելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հեղինակային իրավունքին վերաբերող մի քանի հոդվածներ, չի հիմնավորել, թե ինչպիսի փաստերի հիման վրա է Դատարանը հանգել այն եզրակացության, որ Վարշամ Ղարիբյանը, նշված հոդվածների մեկնաբանության արդյունքում հանդիսանում է վիճելի՝ <<Վանիլային>>, <<Դույլ ընտանեկան>>, <<0,5 կիլոգրամանոց>> պաղպաղակների ծավալային պատկերների հեղինակ, և այդ պարագայում պատասխանող ընկերության կողմից հայցվորի որ իրավունքն է խախտել:
Ավելին՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ՀԻԱԳ-ի կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի պատճենը՝ պաղպաղակների թվով 52 տեսակների և անվանումների վերաբերյալ, որևէ նշում չի պարունակում վիճարկվող պաղպաղակների փաթեթավորման թղթերի դիզայնի նկարագրի վերաբերյալ և, այն, առանց վիճարկվող ծավալային պատկերները կրող փաթեթավորման նմուշների նկարագրի, ոչ մի կապ չի կարող ունենալ վիճելի ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերի հետ, որոնք օգտագործվում են պատասխանող <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության կողմից:
Վերաքննիչ դատարանը գտնում է նաև, որ Դատարանը, անդրադառնալով <<Բրիկետ>>, <<Դույլ ընտանեկան>>, <<Կոռնետ>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> պաղպաղակների ծավալային պատկերները ի պահ հանձնված լինելու մասի ապացույցներին և նշելով, որ դրանք ի պահ են հանձնվել ինչպես նախորդ, այնպես էլ դրա իրավահաջորդ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում, անտեսել է այն հանգամանքը, որ թեպետ նշված <<Դեկորատիվ-կիրառական ստեղծագործության>> անձնագրերում զետեղված է ՀԻԱԳ-ի անվավումը, սակայն դրանք վավերացված են Հասարակական կազմակերպության կնիքով, և գործում բացակայում է որևէ ապացույց, որով կարող է հաստատվել Հասարակական կազմակերպության՝ ՀԻԱԳ-ի իրավահաջորդ լինելու փաստը: Ընդ որում <<Դույլ ընտանեկան>> պաղպաղակի ծավալային պատկերի վերաբերյալ Դատարան <<ներկայացված Դեկորատիվ-կիրառական ստեղծագործության>> անձնագիրը ընդհանրապես կնքված չէ:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է դատարանը վճիռ կայացնելիս:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի թե' փաստական և թե' իրավական հիմնավորումը:
Վճռի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ նյութական իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:
Վճռում ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:
Վճռի իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա վճռի իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:
Նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ <<Քնար-88>> ՍՊԸ ընդդեմ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ 3-2504(ՏԴ) քաղաքացիական գործ 21.12.2006 թվականին կայացրած որոշմամբ:
Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ թեև Դատարանը հետազոտել է գործում առկա բոլոր ապացույցները, այնուամենայնիվ դրանց գնահատման հարցում եկել է սխալ եզրահանգման, հետևաբար կայացված դատական ակտն անհիմն է:
Ելնելով վերոգրյալից՝ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում բողոքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածների պահանջները Դատարանի կողմից խախտված լինելու փաստարկները:
Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով բողոքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները Դատարանի կողմից խախտված լինելու հիմքին, գտնում է, որ այն նույնպես հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից:
Սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է նաև ՀԻԱԳ-ի կողմից 06.04.1998 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի պատճենը, Կազմակերպության կողմից 27.03. 2006 թվականին տրված թիվ 07/81, 01.08.2008 թվականին տրված թիվ 07/285 գրությունների պատճենները, որոնց համաձայն՝ ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված են Վարշամ Ղարիբյանի <<Դիզայն երկեր>> օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները՝ Բաժակ <<Կոնաձև>>, Բաժակ <<Ձահ փոքր>>, Բաժակ <<Ձահ մեծ>>, Վաֆլե տարրա <<Նավակ>>, <<Գնդակ պլաստմասսե>> օբյեկտների նկատմամբ, ինչպես նաև հայցվոր Վարշամ Ղարիբյանը ՀՀ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել <<Կոնֆետներ>>-ի փաթեթի դիզայն, <<Շանթ>> ապրանքային նշանի դիզայն ստեղծագործությունները:
Մինչդեռ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերը նշված ծավալային պատկերները պատասխանող կազմակերպության կողմից օգտագործվելու վերաբերյալ հայցվորի կողմից դատարան որևէ պահանջ չի ներկայացվել, հետևաբար դրանք սույն քաղաքացիական գործով վեճի առարկա չեն հանդիսանում:
Վեճի առարկայի հետ կապ չունեն նաև Դատարանի կողմից հայցի

	բավարարման առումով գնահատված մյուս ապացույցները, մասնավորապես՝ ՀԻԱԳ-ի կողմից 17.05.2000 թվականին, 04.08.2000 թվականին տրված տեղեկանքները, քանի որ դրանք վերաբերում են <<Տոնական>> պաղպաղակ-տորթի և <<Սյուրպրիզ>> պաղպաղակի դիզայնին, որոնք նույնպես սույն գործով վեճի առարկա չեն հանդիսանում: Ուստի ելնելով վերոգրյալից՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հայցի բավարարման հիմքում դրված ՀԻԱԳ-ի կողմից 06.04.1998 թվականին տրված թիվ 00218 վկայականի պատճենը, Կազմակերպության կողմից 27.03. 2006 թվականին տրված թիվ 07/81, 01.08.2008 թվականին տրված թիվ 07/285 գրությունների պատճենները, ՀԻԱԳ-ի կողմից 17.05.2000 թվականին, 04.08.2000 թվականին տրված տեղեկանքները սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար որևէ նշանակություն ունենալ չեն կարող, վերաբերելի չեն սույն գործին, հետևաբար Դատարանը դրանք պետք է հաներ ապացույցների կազմից: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ հիմնավոր է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջների խախտման մասին վերաքննիչ բողոք բերած անձի պատճառաբանությունը՝ նկատի ունենալով, որ գործում առկա չէ և հայցվորի կողմից չի ներկայացվել հայցը հիմնավորող թույլատրելի, վերաբերելի և ապացուցողական նշանակություն ունեցող որևէ հիմնավոր ապացույց, որը դատարանին հնարավորություն կտար գալ նման եզրահանգման և բավարարել Վարշամ Ղարիբյանի հայցն ընդդեմ <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության՝ հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին: Մինչդեռ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը: Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում վերաքննիչ բողոքում նշված՝ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ, 132-րդ հոդվածների խախտման վերաբերյալ փաստարկները, որոնք բավարար հիմք են վերաքննիչ բողոքը բավարարելու և վճիռը բեկանելու համար: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վերաքննիչ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում

	Վերաքննիչ դատարանի կողմից Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵՄԴ/0636/02/09 քաղաքացիական գործով 2009 թվականի սեպտեմբերի 24-ին կայացված վճիռը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Դատական ակտը փոփոխելիս Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանություններն, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ, 221-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց 1. <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության տնօրեն Մ.Ղուկասյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն: 2. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵՄԴ/0636/02/09 քաղաքացիական գործով 2009 թվականի սեպտեմբերի 24-ին կայացրած վճիռը բեկանել և փոփոխել. Վարշամ Ղարիբյանի հայցն՝ ընդդեմ <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության՝ հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին՝ մերժել: 3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված: 4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Նախագահող դատավոր դատավոր դատավոր Գ.Մատինյան Լ.Գրիգորյան Ա.Թումանյան Ծանոթություն՝ Սույն որոշումը մտել է օրինական ուժի մեջ: Նախագահող դատավոր Գ. Մատինյան
Դատական ակտի ամսաթիվը:	27-01-2010
Ամսաթիվ:	03-02-2010
Ամսաթիվ:	03-02-2010
Էջերի քանակ:	2h,1՝114թ,2՝109թ
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	04-03-2010
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	
Այլ նշումներ:	

Ամսաթիվ:	09-03-2010

Դատական Գործ N: ԵՄԴ/0636/02/09

Ամսաթիվ:	01-03-2010
Բողոք բերող անձը	
Անուն	Վարշամ
Ազգանուն	Ղարիբյան
Հասցե	Երևան, Եղիազարյան 10
Ներկայացուցիչ	
Անուն	Ազատ
Ազգանուն	Շահբազյան
Հասցե	Երևան, Տիգրան Մեծի 4, սեն. 304
Պետական տուրք:	20000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	ըստ հայցի՝ Վարշամ Ղարիբյանի ընդդեմ <<Արմ Սվիթ>> ՍՊ ընկերության՝ հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին
Գործի համարը:	ԵՄԴ/0636/02/09
Ում կողմից է բերվել բողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ

Գործի ստացման ամսաթիվը:	09-03-2010
էջերի քանակը:	114
Գործին կից փաստաթղթերը:	2՝109թ
Վճռաբեկ վարույթի համարը:	ԵՄԴ/0636/02/09

Ամսաթիվ:	09-03-2010
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ

Դատավորի անուն:	Երվանդ Հենրիկի Խունդկարյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	07-04-2010
Որոշման բովանդակությունը:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0636/02/09 դատարանի որոշում 2010թ. Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0636/02/09 Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան Դատավորներ՝ Լ. Գրիգորյան Ա. Թումանյան ՈՐՈՇՈՒՄ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ <<07>> ապրիլի 2010թ. ք.Երևան Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), նախագահությամբ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ Մ. ԴՐՄԵՅԱՆԻ Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ քննարկելով ըստ հայցի Վարշամ Ղարիբյանի ընդդեմ <<Արմ Սվիթ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ հեղինակային իրավունքները խախտող գործողությունները կանխելու, որպես դրա հետևանք պատասխանողի կողմից հայցվորին հեղինակային իրավունքով պատկանող ծավալային պատկերների օգտագործումն արգելելու, ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը շրջանառությունից դուրս բերելուն և ոչնչացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2010 թվականի որոշման դեմ Վարշամ Ղարիբյանի ներկայացուցիչ Ազատ Շահբազյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, ՊԱՐԶԵՑ 1. Գործի դատավարական նախապատմությունը Դիմելով դատարան՝ Վարշամ Ղարիբյանը հայտնել է, որ ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի համաձայն՝ հաստատվել է Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի <<Դեկորատիվ կիրառական արվեստի երկ>>, <<Պաղպաղակների տեսակներ և անվանումներ>> /թվով 52/ օբյեկտների հետ (այդ թվում՝ <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազիա>>, <<Կոռնետ>>, <<Դույլ ընտանեկան>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>>) կապված հեղինակային բոլոր իրավունքները: Գործակալության կողմից 06.04.1998 թվականին տրված հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի համաձայն՝ հաստատվել է

Գործակալությունում գրանցված բացառապես Վարշամ Ղարիբյանի <<Դիզայն երկեր>> օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները: Համաձայն ՀՀ <<Հայհեղինակ>> հեղինակային իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից 27.03.2006 թվականի թիվ 07/81, 01.08.2008 թվականի թիվ 07/285 և 18.11.2008 թվականի թիվ 07/416 գրությունների՝ Վարշամ Ղարիբյանը ՀՀ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել իր ստեղծագործությունները: Պատճառաբանելով, որ Ընկերությունը 2008 թվականի հունիս ամսից սկսած պաղպաղակ արտադրելով, առանց իր համաձայնության, պատրաստի արտադրանքը փաթեթավորել է հեղինակային իրավունքով իրեն պատկանող դեկորատիվ կիրառական արվեստի երկեր հանդիսացող ծավալային պատկերները կրող պաղպաղակի փաթեթավորման թղթերով, կամ շփոթելու աստիճանի դրանց նմանություն ունեցող համակցված նշաններ պարունակող փաթեթավորման թղթերով, իրացնելով արտադրանքն այդ տեսքով, որպիսի գործողությունների արդյունքում խախտվել են իր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները, պահանջել է կանխել իր հեղինակային իրավունքների խախտումներն Ընկերության կողմից և որպես հետևանք Ընկերությանն արգելել հեղինակային իրավունքով իրեն պատկանող ծավալային պատկերների օգտագործումը և պարտավորեցնել նրան ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերը դուրս բերել շրջանառությունից և ոչնչացնել:
Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.09.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.01.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 24.09.2009 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վարշամ Ղարիբյանի ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումների հիմքով:
Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1102-րդ, 1103-րդ, 1104-րդ, 1116-րդ և 1124-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 220-րդ հոդվածները:
Բողոք բերած անձը սույն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը պատճառաբանում է հետևյալ հիմնավորումներով.
Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին:
Բողոք բերած անձը նշված հիմնավորումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.
Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ վեճի առարկա հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ստեղծագործությունների նկատմամբ Վարշամ Ղարիբյանի բացառիկ իրավունքները ծագել են դրա ստեղծման պահից, անկախ այդ իրավունքի գրանցման կամ որևէ այլ ձևակերպման: Նման պայմաններում Ընկերությունը, օգտագործելով վեճի առարկա ծավալային պատկերները, խախտել է Վարշամ Ղարիբյանի՝ այդ

ծավալային պատկերների նկատմամբ ունեցած բացառիկ իրավունքները:
Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որոշման պատճառաբանական մասում չի նշել գործի այնպիսի հանգամանքներ և ապացույցներ, որոնց վրա կարող էր հիմնվել որոշում կայացնելիս և հայցը մերժելիս:
Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս չի պատճառաբանել, թե ինչպիսի փաստերի և ապացույցների հիման վրա է հանգել այն եզրակացության, որ վեճի առարկա հեղինակային իրավունքի օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքները չեն պատկանում Վարշամ Ղարիբյանին, ինչպես նաև, որ Ընկերությունը, օգտագործելով այդ ծավալային պատկերները, չի խախտում Վարշամ Ղարիբյանի բացառիկ իրավունքները:
Քաղաքացիական գործի տվյալների համաձայն՝ Ընկերությանը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ վեճի առարկա ծավալային պատկերները (<<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազիա>>, <<Կոռնետ>>, <<Դույլ ընտանեկան>>, <<1 և 0.5 կիլոգրամանոց>>) ստեղծվել է իր կողմից կամ իր պատվերով, կամ մեկ այլ անձի կողմից, ով թույլ է տվել վերջինիս այն օգտագործել: Ավելին, Վարշամ Ղարիբյանի կողմից ստեղծված վեճի առարկա ծավալային պատկերները՝ <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազիա>>, <<Կոռնետ>>, <<Դույլ ընտանեկան>>, <<1 և 0.5 կիլոգրամանոց>> դեռևս 1998 թվականից ի պահ են հանձնված եղել Գործակալությանը, որի վերաբերյալ ապացույցներն առկա են քաղաքացիական գործում:
Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի թիվ 3-2504(ՏԴ), 25.12.2007 թվականի թիվ 3-1843(ՎԴ), 01.02.2008 թվականի թիվ 3-89(ՏԴ) որոշումներին:

Վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.01.2010 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.09.2009 թվականի վճռին:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը
Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումները՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ:
Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով:
Այսպես, Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս պատճառաբանել է, որ <<սույն գործով Դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1111-րդ, 1112-

	րդ,1124-րդ հոդվածներին, ինչպես նաև <<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի պահանջներին, հաստատված է համարել, որ հայցվոր Վարշամ Ղարիբյանը վիճարկվող ծավալային պատկերների հեղինակն է, նշել է, որ նրա իրավունքը, որպես այդպիսին սահմանված կարգով գրանցված է ՀԻԱԳ-ի կողմից, և հեղինակային իրավունքով նրան են պատկանում <<Բրիկետ>>, <<Վանիլային>>, <<Ֆանտազիա>>, <<Կոռնետ>>, <<Դույլ ընտանեկան>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների հեղինակային բոլոր իրավունքները, որոնք ի պահ են հանձնվել ինչպես նախորդ, այնպես էլ դրա իրավահաջորդ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում: Դատարանը Վարշամ Ղարիբյանի հայցի բավարարման համար, որպես ապացույց հիմք է ընդունել ՀԻԱԳ-ի կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 պատճենը, որի համաձայն՝ ՀԻԱԳ-ում գրանցված են Վարշամ Ղարիբյանի՝ <<Դեկորատիվ կիրառական արվեստի երկ>>, <<Պաղպաղակների տեսակներ և անվանումներ>> (թվով 52) օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները>>, և գտել է, որ <<նշված վկայականի պատճենում առկա թվով 52 <<Պաղպաղակների տեսակներ և անվանումներ>>-ի մեջ նշված են միայն <<Արմ Սվիթ>> ՍՊԸ-ի կողմից օգտագործվող <<Բրիկետ>>, <<Ֆանտազիա>>, <<1 կիլոգրամանոց>>, <<Կոռնետ>> անվանումները, իսկ վիճարկվող <<Վանիլային>>, <<Դույլ ընտանեկան>>, <<0,5 կիլոգրամանոց>> տեսակի պաղպաղակների ծավալային պատկերների վերաբերյալ նշված վկայականում որևէ նշում չկա: Այսինքն՝ բողոքարկած վճռում դատարանը, նշելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հեղինակային իրավունքին վերաբերող մի քանի հոդվածներ, չի հիմնավորել, թե ինչպիսի փաստերի հիման վրա է Դատարանը հանգել այն եզրակացության, որ Վարշամ Ղարիբյանը, նշված հոդվածների մեկնաբանության արդյունքում հանդիսանում է վիճելի՝ <<Վանիլային>>, <<Դույլ ընտանեկան>>, <<0,5 կիլոգրամանոց>> պաղպաղակների ծավալային պատկերների հեղինակ, և այդ պարագայում պատասխանող ընկերության կողմից հայցվորի որ իրավունքն է խախտվել: Ավելին՝ ՀԻԱԳ-ի կողմից 22.07.1997 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00172 վկայականի պատճենը՝ պաղպաղակների թվով 52 տեսակների և անվանումների վերաբերյալ, որևէ նշում չի պարունակում վիճարկվող պաղպաղակների փաթեթավորման թղթերի դիզայնի նկարագրի վերաբերյալ և, այն, առանց վիճարկվող ծավալային պատկերները կրող փաթեթավորման նմուշների նկարագրի, ոչ մի կապ չի կարող ունենալ վիճելի ծավալային պատկերները կրող փաթեթավորման թղթերի հետ, որոնք օգտագործվում են պատասխանող <<Արմ Սվիթ>> ՍՊԸ-ի կողմից>>: Այնուհետև Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ <<Դատարանը, անդրադառնալով <<Բրիկետ>>, <<Դույլ ընտանեկան>>, <<Կոռնետ>>, <<1 և 0,5 կիլոգրամանոց>> պաղպաղակների ծավալային պատկերներն ի պահ հանձնված լինելու մասի ապացույցներին և նշելով, որ դրանք ի պահ են հանձնվել ինչպես նախորդ, այնպես էլ դրա իրավահաջորդ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում, անտեսել է այն հանգամանքը, որ թեպետ նշված <<Դեկորատիվ-կիրառական ստեղծագործության>> անձնագրերում զետեղված է ՀԻԱԳ-ի անվավումը, սակայն դրանք վավերացված են Հասարակական կազմակերպության կնիքով, և գործում բացակայում է որևէ ապացույց, որով կարող է հաստատվել Հասարակական կազմակերպության՝ ՀԻԱԳ-ի իրավահաջորդ լինելու փաստը: Ընդ որում <<Դույլ ընտանեկան>> պաղպաղակի ծավալային պատկերի վերաբերյալ Դատարան <<ներկայացված Դեկորատիվ-կիրառական ստեղծագործության>> անձնագիրն ընդհանրապես կնքված չէ>> և գտել է, որ <<թեև Դատարանը հետազոտել է գործում առկա բոլոր ապացույցները, այնուամենայնիվ դրանց գնահատման հարցում եկել

է սխալ եզրահանգման, հետևաբար կայացված դատական ակտն անհիմն է>>:
Վերաքննիչ դատարանը պատճառաբանելով նաև, որ <<սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է նաև ՀԻԱԳ-ի կողմից 06.04.1998 թվականին տրված Հեղինակային իրավունքի օբյեկտի գրանցման մասին թիվ 00218 վկայականի պատճենը, Կազմակերպության կողմից 27.03.2006 թվականին տրված թիվ 07/81, 01.08.2008 թվականին տրված թիվ 07/285 գրությունների պատճենները, որոնց համաձայն՝ ՀՀ Հեղինակային Իրավունքների Ազգային Գործակալությունում գրանցված են Վարշամ Ղարիբյանի <<Դիզայն երկեր>> օբյեկտների հետ կապված հեղինակային բոլոր իրավունքները՝ Բաժակ <<Կոնաձև>>, Բաժակ <<Ձահ փոքր>>, Բաժակ <<Ձահ մեծ>>, Վաֆլե տարրա <<Նավակ>>, <<Գնդակ պլաստմասսե>> օբյեկտների նկատմամբ, ինչպես նաև հայցվոր Վարշամ Ղարիբյանը ՀՀ <<Հայհեղինակ>> հասարակական կազմակերպությունում ի պահ է հանձնել <<Կոնֆետներ>>-ի փաթեթի դիզայն, <<Շանթ>> ապրանքային նշանի դիզայն ստեղծագործությունները>>, գտել է, որ <<վերը նշված ծավալային պատկերները պատասխանող կազմակերպության կողմից օգտագործվելու վերաբերյալ հայցվորի կողմից դատարան որևէ պահանջ չի ներկայացվել, հետևաբար դրանք սույն քաղաքացիական գործով վեճի առարկա չեն հանդիսանում: Վեճի առարկայի հետ կապ չունեն նաև Դատարանի կողմից հայցի բավարարման առումով գնահատված մյուս ապացույցները, մասնավորապես՝ ՀԻԱԳ-ի կողմից 17.05.2000 թվականին, 04.08.2000 թվականին տրված տեղեկանքները, քանի որ դրանք վերաբերում են <<Տոնական>> պաղպաղակ-տորթի և <<Սյուրպրիզ>> պաղպաղակի դիզայնին, որոնք նույնպես սույն գործով վեճի առարկա չեն հանդիսանում>>:
Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ <<հայցի բավարարման հիմքում դրված ՀԻԱԳ-ի կողմից 06.04.1998 թվականին տրված թիվ 00218 վկայականի պատճենը, Կազմակերպության կողմից 27.03.2006 թվականին տրված թիվ 07/81, 01.08.2008 թվականին տրված թիվ 07/285 գրությունների պատճենները, ՀԻԱԳ-ի կողմից 17.05.2000 թվականին, 04.08.2000 թվականին տրված տեղեկանքները սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար որևէ նշանակություն ունենալ չեն կարող, վերաբերելի չեն սույն գործին, հետևաբար Դատարանը դրանք պետք է հաներ ապացույցների կազմից>>:
Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով դատական ակտը, հիմնվելով Դատարան ներկայացված ապացույցների վրա, իրավացիորեն վերաքննիչ բողոքը բավարարել է:
Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը <<Մելտեքս>> ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ թիվ 32283/04) գործով 17.06.2008 թվականի վճռով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ, արտահայտել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ <<Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ: Նման հանգամանքներում չի կարելի ասել, որ Վճռաբեկ դատարանը չէր նշել հիմնավորում միայն այն պատճառով, որ այն հաստատել էր ավելի ցածր ատյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ>>:
Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձը չի հիմնավորել նաև օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի սույն գործով որոշման էական նշանակություն ունենալու հանգամանքը, իսկ վերանայվող դատական ակտը չի հակասում ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած վճռաբեկ բողոքում նշված որոշումներին, քանի որ սույն գործի և վճռաբեկ

	բողոքում նշված որոշումների գործերի փաստական հանգամանքները նույնական չեն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, նոր երևան եկած կամ նոր հանգամանքները: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումները՝ դատական սխալի առկայության, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու, ինչպես նաև վերանայվող դատական ակտը ՀՀ Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին առերևույթ հակասելու մասին, անհիմն են, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջներին: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, այն ենթակա է վերադարձման: Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ և 234-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը ՈՐՈՇԵՑ 1. Վերադարձնել թիվ ԵՄԴ/0636/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.01.2010 թվականի որոշման դեմ Վարշամ Ղարիբյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը: 2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման: Նախագահող՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ Դատավորներ՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ Վ. ԱԲԵԼՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Մ. ԴՐՄԵՅԱՆ Է. ՀԱՅՐԻՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Ամսաթիվ:	14-04-2010
Գործի առաքման ամսաթիվը:	23-04-2010
Դատարան:	Մալաթիա-Սեբաստիա
Այլ նշումներ:	2 հատոր

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 26 Մայիս 2011